Այդ սարդայնոց ընդհանուր տեսութիւնն այս է։

Թռչաւորք կը կոչուին, ըստ որում նման քսակներ ունին շնչառութեան ուրոշուած։ Աչքերնին՝ վեցէն մինչև ութ։ Ծնօտիկնին եղջերեայ շարժուն կեռով մը կը վերջանայ որ միշտ վրանին կը ծալուի, և ծայրին մօտ նուրբ ճեղք մը ունի, ուսկից թոյնը կը վազէ։ Որովայնին կակուղ և առանց մասնաւոր բաժանման, որուն ծայրը չորս ցցուած պտկունք կան, մաղակերպ ծակծկած, ուսկից մետաքսեայ թելեր կ'ելլեն։ Շոշափուկնին ոտնանման, հինգ յօդուածով, առանց սրածայր կեռի. միայն երբեմն եռքի յօդուածին վրայ սրածայր ուռեցք մը կ'ունենան, նշան սարդայնոց։ Չորս զոյգ ոտք, վեց վեց յօդուածով։

Այս՝ ընդհանուր տեսութիւն։

Հ. Յ. Վ. ԻՍԱՎԵՐՑԵՆՑ

Կը շարունակուի։

ՃԱՆԱՊԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
ԶՈՒԱՐ ՃԻՑԷՐՃԻ ՕՂԼՈՒ ՔԱՀԱՆԱՑԻ

(Տես Ի՝ տարի երես 370)

Ապա գնալք սուրբ յարութեան դըռան աջ կողմն, որ ասացի թէ երեք երեք սիւն կայ երկու կողմն. այս կողմի երեք սեանն մէջ տեղի սիւնն պատառեր է թիրիզի նման մէկ և կէս արշուն կայ. զպատճառն սորա պատմեմք. ումանք կ'ասեն թէ բաղում՝ աղքատ մնացեր դուրս և ոչ են առեալ ներս, նորա համար պատառեր է սիւնն այն, և անտի ելեր լոյսն. — ոչ այսպէս. այլ առաջի ժամանակն՝ միւթէվէլլի քով եաղըճին հրեայ է եղեր. տեսեր որ այնպէս հրաշք կու լինայ՝ նախանձ կ'անէ կ'ասէ թէ դալու տարի բան ինչ խորհիմ, և միւթէվէլլուն միտքն կու գողանայ մինչև հազար զուրուշ կու տայ թէ խթման օրըն մի բանար, աղբայ որ կայ՝ սուտ են, ասելով. և նայ կու հաւանի նորա խօսացն և կ'առնէ զհազար զուրուշն. և խթման օր ըխտաւորք կու ժողովին 'ի մի տեղ, թէ մընանունք ներս որպէս սովոր է։ Այս միւթէվէլլին չի բանար զդուռն, Հայք Ֆռանք և Յունք, վէքիլք և թէրճիմանք 'ի մի տեղ կու դան, թէ ընդէր չես բանար, այսչափ տարի չէ եղեր ընդէր այսպէս կ'անես. և նայ պատասխանեալ թէ այսօր չեմ բանար բայց վաղն կու բանամ. և անիծեալ Հրեայն այն իրը չդիտելով անմունչ կանկներ է անդ. և յորժամ եղև օրն հասարակ, դեռևս կու վիճեն թէ բաց զդուռն. և ըխտաւորք զմոմերն 'ի ձեռին իւրեանց ունելով լաց և հառաչանք անելով, եկն ժամանակ լուսոյն. յանկարծակի որոտմունք իրև ամպ գոռաց. և ձայնէն ամենեքեան զարհուրէին. և միւթէվէլլին այն խեղճ մոլորեալն և հրեայն ընդ նմա կու հայէին այս կոյս և այն կոյս. և որոտմունքն սաստկանայ քան զչափն աւելի. և խլկոյն սիւնն այն պատառեալ և լուսն անտի ճառագայթեալ, որ ըխտաւորք անտի կու լուսաւորին, և միւթէվէլլին խափք կու լինա հանդերձ Հրէով։ Եւ յորժամ այսպէս կու տեսանեն ակնեբև հանեալ զսուրն և թափին վերան, զհրէայն կտոր կտոր կ'անեն։ Այն տարին այսպէս հրաշք է եղեր. յետ նորա դռանն առաջև խոշոր գամեր զարկած 'ի գետնի, թէ այն օրն ով որ կարողութիւն ունի մէկ կամ երկու աղքատ ներս առնէ. վերջն մնացածն թագաւորին և միւթէվէլլուն գլխուն սատաղաներս ընու, եթէ որ անդգնի կամ պատճառ լինա՝ այն գամերն իւրեան աչքին մէջն միվի. և յետոյ պայման եդեալ քաղաքացիք, թէ դատաւորք այս երկու դռան արալըխն հրէայ տեսնէք՝ խլկոյն սպանէք զնայ առանց յապաղելոյ. և կայ այս պայման մինչև ցայսօր, որ այն տեղացն հրէայ չի կարնար անցնիր։ Եւ այս է ստոյգ պատճառն, եղբայր, և Քրիստոսի փառք։

Եւ այս պատառած սեանն կից է դանկակատունն փառաւոր և գեղեցիկ

բարձրաշէն, եօթը տապաղա, և գլուխն թագանման, և ունի երեսունըմէկ լուսամուտ. 'ի բոլոր լուսամուտներուն՝ հարիւրերեսունըչորս բարակ մէրմէր սիւն. և կէս տեղն Հռոմոց վանից զդեստն է, և ունի չորապան[1]. և ներքևն Յունաց ազգին փոքրիկ եկեղեցի Յոհաննու աւետարանչի: Եւ 'ի այս մէյտանն հարցանես եղբայր, երկայնութիւնն երեսունըչորս ատըմ և լայնութիւնն քսանուիրեք ատըմ. բակին ճակատն երեք ղատէմէ. այր և կին ծեր և տղայ այնչափ կու լցվին որ ասեղ ձգելու տեղ չկայ. սախըն կեցիր եանքէսիճիէն, մարդոյ աչից ծարուրն կու գողանան: Անդ ներստեալ սարաֆներ ոմն մանղըր դիզեալ, ոմն զօլօթայ կու աւրեն, և ոմն ոսկի. իշալլահ, այնպէս հարուստ են՝ որ մէկ ոսկի մի աւըրես առաջևն բան չմնար: Աստ և նստին պիլէզիկըճիք, խունկ ծախող, միսք, սապոն, հալղաճի. տասնըչորս ղատէմէ է մինչև 'ի փոքր դուռն. աստ նստին աղքատք: Լաւ իմացի թէ ինչ կ'ասեն. հալղաճին կ'ասէ, թէ մըսի՝ հալվայ, ֆախիր ֆուխարէ՝ մըսի. միւսն թէ, քօր միսկն միւքին մըսի. մէկն այլ թէ, Աստուած ողորմած, մըսի. այլ և միւսն կ'ասէ, թէ իշալլահ մերհամէթ մըսի. կէսն հայրէն կէս արպերէն ջարդելով. իմացիր որ մըսի ասելն քէչէյին կ'ասեն:

Այն փոքր դուռն նեղ հաղիւ դուրս կու ելանես ղալապալըխէն. ձախ կողմն խանութ մի՝ որ զօլանճի է, Հռոմ խէննէ անունն, որ Յոհաննէս թարքմանի. քոմն դուռ մի չէխ Մուստաֆային տունն է, և է սորայ կից սափրիչի խանութ. մի այլ 'ի վեր հէլվաճու խանութ, պապուճճի ղանութ. այլ 'ի վեր պիլէզիկըճու խանութ որ աստ նստին կանայք[2] առնելով՝ օսանմիշ չեն լինար, և նայ ծախելով: Ապայ այլ 'ի վեր գաս աջ կողմն քօշէին գլուխն Հռոմոց վանից դուռն է. այս կողմն կու գնայ դէպ 'ի Ֆռանկաց վանքն. ձախ կողմն խորդտոց և Հռոմոց խանութներ. երբ ձուկ գայ Եաֆայու՝ աստ ծախեն: Սորայ սըրան կայ բաղանիս. սուրբ Յօհաննու փոքր վանքն Հռոմոց ձեռքն է, դիմացն խանութներ, ճէմճի, չիլինկիր, սանտըխճի, պէրպէր, ղահվէղանա. մի կողմն կու հայի պիւրքէին վերայ. այն դիմաց բաղանիսն այս պիւրքէին կ'երթայ ջուրն քէմէրին վերայով: Եւ'կ քօչէն՝ որ յէնկիչէրիք կու նստին որ է ղահվէղանա. ապա ելանես 'ի վեր մեծ մէյտան, և բերդի առաջևոմն գնաս 'ի վանքն:

Յետ դառնամք սուրբ Յարութեան միւս փոքր դռնէն դուրս ելնես. աջ կողմն մեծ պաղչայ մի որ գառնապետի մկքան է. աստ են թապախներն. առաջ գնա՛ սուրբ Ստեփանոսի եկեղեցին. որ այժմուս բանդ է. ով որ պարտատիրաց այս բանդն դնեն, առանց փակի առաջևն մեծ բակ, շուրջ կու գայ դուռն բաց, ոչ որ չի կարնար դուրս ելանել. ամէն մարդոյ իւր պարտատէր գայ առնէ զպարտական և հանէ դուրս: Գնաս առաջ որ շուկան պիտի երթաս. ձախ կողմն սուրբ Աստուածածնայ գերեզմանին ճանապարհն է. և շատ տեղ կու գնայ. և աջ կողմն մուտ դռնէն ներս, Հայք ղազանճիք, իփլիքճիք, պօյեայճիք, ղասապք, պախալ, չախըլ պիտէճիք, աչճիք, քէպապճիք, ղունտախճիք, սառաճք, ղաղէզ, ճիզմէճիք, ղաւախճիք, պաղրկեանք. մինչև 'ի վայր դառն գեղեցիկ տաճարին. և աջ կողմն մէհքէմէն մտանես ներս. մէջ տեղն չատրուվան, որ վեց տեղաց կու վազէ ջուրն. և ելանես դուրս, դիմացն աղբիւր մի. մի՛ ասեր թէ յերուսաղէմ աղբիւր չկայ. սորայ ջուրն հայր Աբրահամու այլ հեռուէն կու գայ. սայ աղբիւրին քով գերձկի խանութ մի. ով մօլլա լինայ՝ դերձակն աստ նստի. և ես անդ շատ մուհասէրէ քաշեցի. և էր դերձագն Լնկիւրցի Պետրոս անուն կտրիճ մի. մինչև 'ի զատիկ կեցայ և գնացայ:

1 Զգեստի, լաթի վերակեցու:
2 Բառ մը կը պակսի: